ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

<< 17 >> 10 2011թ. N: 364-Ա **ք.Գյումրի**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ <<ՎԱՀՐԱՄԱԲԵՐԴԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ>> ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԴԻՐ ՏՆՕՐԵՆԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ ՍՊԱՐՏԱԿ ԹՈՐՈՍՅԱՆԻ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԴԱԴԱՐԵՑՆԵԼՈՒ ԵՎ ՍՊԱՐՏԱԿ ԹՈՐՈՍՅԱՆԻՆ ԳՈՐԾԱԴԻՐ ՏՆՕՐԵՆԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի, Հայաստանի Հանրապետության <<Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին>> օրենքի 15-րդ հոդվածի 1-ին կետի դրույթներով, հիմք ընդունելով Սպարտակ Թորոսյանի 2011 թվականի հոկտեմբերի 12-ի դիմումը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. 2011 թվականի հոկտեմբերի 18-ից դադարեցնել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի <<Վահրամաբերդի միջնակարգ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության գործադիր տնօրենի պաշտոնակատար Սպարտակ Թորոսյանի լիազորությունները:
2. 2011 թվականի հոկտեմբերի 18-ից Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի <<Վահրամաբերդի միջնակարգ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության գործադիր տնօրենի պաշտոնակատար նշանակել Սպարտակ Թորոսյանին՝ մինչև այդ պաշտոնում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տնօրենի ընտրությունը (նշանակումը):

Ա. ԳԻՋԻՐՅԱՆ

Իսկականի հետ ճիշտ է՝